

Անգլիայի թագաւորն երբեք չվշտացաւ Լեւոնի խիստ բայց արգարացի գիտողութիւններէն . ուստի՝ հետեւեալ կարճ պատասխանը տուաւ .

« Ես սիրով կ'ընդունիմ խաղաղութեան դաշինքը , եթէ զայն բերէք ինձ այն պայմաններով՝ զորս զրաւ հանգուցեալ թագաւորն՝ իմ բարձրապատիւ տէրս եւ հայրս : Գաղղիոյ թագաւորութիւնը իրեն կը պատկանէր մօրը իրաւամբ , եւ նա յանձն առաւ թողուլ իւր պահանջը՝ միայն թէ արուին իրեն Գիւլյէնի (1) եւ Նորմանդիոյ դքսութիւնները : Ես ալ հօրս գաղափարին վրայ եմ , որ եթէ կատարուի , պատրաստ եմ կնքելու խաղաղութեան դաշինքը , եւ հաստատելու Գաղղիոյ թագին հետ անվերջ դաշնակցութիւն մը(2) : »

Բայց որպէս զի Լեւոնի ատաշարկն հմուտ պաշտօնեաներու կողմէ քննութեան առնուի եւ անմիջապէս գործի ձեռնարկուի , իր 1386 յունվ. 22-ի հրովարտակով վեց հոգիէ բաղկացած Գննիչ Յանձնախումբ մը կազմեց , եւ « Մեր Եղբայրակից Հայոց Թագաւորին կողմէ Մեզի եղած պաղատագին ազաւանաց եւ խնդրանաց համեմատ » , ինչպէս կըսէ նոյն հրովարտակը (3) , սկզբունքով հաշտութիւնն ընդունեց : Կը մնար պայմաններու մասին խորհիլ :

Գժբախտաբար ամէն կողմէ փափագուած հաշտութիւնը տեղի չունեցաւ , որովհետեւ , ինչպէս համարձակ կերպով յայտարարած էր Լեւոն , « փատասերութիւնն » — աւելցնենք նաեւ՝ երկրակալական ազահութիւնը — արգելք էր այսպիսի վսեմ նպատակի մը իրագործման . մարդիկ կը նախընտրէին իրար ուտել քան թէ իրարու ձեռք սեղմել :

Անգլիացի ժամանակագիր մը՝ Հոլինշէդ՝ այսպէս կը խօսի Լեւոնի Լոնդոն երթալուն եւ փորձած հաշտութեան մասին . « Այս տարի Հոբարդ թագաւորը ս. Մնուէրը կը ածուէր Էլթամի մէջ , ուր իրեն եկաւ Հայաստանի թագաւորը՝ Լեւոն , որուն երկիրն ու թագաւորութիւնը Թուրքերէն նուաճուելու վտանգին մէջ ըլլալով՝ ան քրիստոնէութեան այս արեւմրական երկիրներն եկած էր քրիստոնեայ իշխաններէն օգնութիւն ու նպաստ խնդրելու համար : Թագաւորը պատուով ընդունեց զայն եւ անոր խընդիբքի մասին խորհուրդ ընելէ ետքը՝ մեծագումար զբամ եւ ուրիշ ձօխ նուէրներ տուաւ անոր , հանդերձ — ինչպէս կը զրեն ոմանք — իրեն ցկեանս վճարելի հազարտակեայ տարեթոշակով մը : Ան հոս երկու ամիս

(1) Բագմալիկ սպած է՝ Գուլան :

(2) Անդ , նոյն երես :

(3) Այս հրովարտակին մեջ Հայոց մասին ուրիշ բան չըլլալուն՝ անոր քարգմանութիւնը զանց կընեմ . բայց իբրեւ Լեւոնի հետ կապ ունեցող վաւերագիր՝ բնագիրը կը գնեմ գրիս վերջը , զոր տե՛ս Document XX.